ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ

Պատմական այս անձնավորության՝ Շամիրամի շուրջ ստեղծվել են բազմաթիվ առասպելներ, որոնցից մեկն էլ գրի է առել Խորենացին: Ըստ հույն պատմիչների՝ Շամիրամը համարվել է սիրո և պտղաբերության ասորական Դերկետո աստվածուհու (այլ տարբերակով՝ Աստարտա) դուստրը: Իբր մորից լքված մանկահասակ Շամիրամին լեռներում կերակրել են աղավնիները և խնամել հովիվները: Ըստ այդմ՝ Սեմիրամիդա հունարեն նշանակում է լեռնային աղավնի: Հավանական է նաև անվան Սեմի դուստր բացատրությունը: Ըստ ավանդազրույցի՝ Շամիրամն ամուսնացել է Բաբելոնի արքա Նինոսի խորհրդական և Ասորիքի կուսակալ Օննեսի հետ, այնուհետև դարձել Նինոսի կինը: Նինոսի մահից հետո որդու՝ թագաժառանգ Նինուասի խնամակալուհին էր: Վարել է պատերազմեր, կառուցել քաղաքներ, պաշտպանական ամրություններ, ջրանցքներ: Նրան է վերագրվում Բաբելոնի կախվող այգիների հիմադրումը, թեև կառուցվել է 6-րդ դարում Նաբուգոդոնոսոր III թագավորի օրոք և համարվում է հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը:

Ըստ ավանդազրույցների՝ Շամիրամը վարել է շվայտ կանք, վատնել արքունական գանձերը, ինչի համար հալածվել է որդուց, վերածվել աղավնու և դարձել աստվածուհի: Ըստ մեկ այլ տարբերակի՝ հալածվել և սպանվել է Նինուաս որդու կողմից կամ վերածվել քարե արձանի:

Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին պատմող ասքը Մովսես Խորենացու գրի առած գեղեցիկ առասպելներից մեկն է: Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարներին իրենց բանաստեղծություններում, բալլադներում և պոեմներում անդրադարձել են Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը, Կոստան Զարյանը: Նաիրի Զարյանը գրել է «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը: